ԿԱՄՈՅԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ 1911—1912 ԹԹ.

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Մայիսի 18 (6)-ին[1] *լրանում է Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյանի (Կամո) ծննդյան 100-ամյակը։ Սովետական իշխանության տարիներին լեգենդար հեղափոխականի մասին հրատարակվել են բազմաթիվ հիշողություններ, փաստաթղթեր, ուսումնասիրություններ, գեղարվեստական գործեր, նկարահանվել են կինոֆիլմեր*[2]*։ Սակայն Կամոյի և նրա զինակիցների կյանքի և գործունեության վերաբերյալ շատ փաստաթղթեր և նյութեր, որոնք գտնվում են տարբեր երկրների արխիվներում ու գրադարաններում, դեռևս սպասում են իրենց ուսումնասիրողներին։ Այդ նյութերը, որոնց մի մասի հետ մենք ծանոթացանք Սովետական Միության և արտասահմանյան մի շարք արխիվներում ու գրադարաններում, զգալիորեն լրացնում են ոչ միայն Կամոյի գործունեության շատ կողմեր, այլև՝ Վ. Ի. Լենինի և լենինյան կուսակցության նախահեղափոխական շրջանի պատմության այն էջերը, որոնք հիմնականում կապված են բոլշևիկների արտասահմանյան գործունեության, նրանց ինտերնացիոնալ կապերի հետ։*

1910 թ. ապրիլին «Սոցիալ-դեմոկրատ» թերթում լույս տեսած «Կուսակցական միավորումը արտասահմանում» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր. «Արտասահմանյան բազան անհրաժեշտ և անխուսափելի է մի կուսակցության համար, որը գործում է այնպիսի պայմաններում, ինչպես մերն է գործում»[3]*։*

Կատարելով Վ. Ի. Լենինի, կուսակցության հանձնարարությունները, Կամոն հաջողությամբ օգտագործում էր նաև հեղափոխական շարժման արտասահմանյան բազան։ Նա գրել է, որ 1906—1912 թթ. ինքը եղել է Եվրոպայի 19 պետություններում՝ Ռուսաստանում հեղափոխական շարժումների համար զենք ու զինամթերք, գրականություն ձեռք բերելու և առաքելու, տարբեր երկրների հեղափոխական գործիչների հետ կապեր հաստատելու համար։ «Ես շրջել եմ ամբողջ Եվրոպայով մեկ՝ Շվեդիայից մինչև Շվեյցարիա»,— ասել է Կամոն։ Խիզախ հեղափոխականի այդ շրջագայությունները, որոնք կատարվել են կուսակցության և նրա առաջնորդ Լենինի անմիջական առաջադրանք-

---

[1] *Գրականության մեջ Կամոյի ծննդյան ամսաթիվը սովորաբար նշվում է մայիսի 27 (15)-ը։ Մինչդեռ տարիներ առաջ հայտնաբերված նրա ծնունդը հաստատող փաստաթղթերում գրանցված է 1882 թ. մայիսի 18 (6)-ը։*

[2] *Տե՛ս* Медведева—Тер-Петросян. Герой революции («Товарищ Камо»), с предисловием П. Лепешинского и примечаниями Л. Зоннна. М.—Л., 1925; Черноморский. Товарищ Камо. Повесть о подвигах и испытаниях, с предисловием А. Кариняна, Л., 1925; R. Obolenskaja. Kamo. Das Leben eines Revolutionärs. Herausg. von der Gesellschaft alter Bolschewiki Verlagsgenossenschaft ausländischer Arbeiter in der UdSSR. M.—Л., 1933; Б. Бибинейшвили. Камо. М., 1934; А. Арутюнян. Камо. Ереван, 1957; Л. Шаумян. Камо. М., 1959; Р. С. Имнаишвили. Камо (жизнь и революционная деятельность С. А. Тер-Петросяна). Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук. Тбилиси, 1968; И. М. Дубинский-Мухадзе. Камо. М., 1974 *և այլն։*

[3] *Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 19, էջ 283։*

ներով, իրագործվել են արտակարգ դժվարությունների հաղթահարմամբ, ցարական ու արտասահմանյան ոստիկանության դաժան հետապնդումների պայմաններում։ 1911—1912 թթ. նա Փարիզում նոր հանդիպումներ է ունենում Վ. Ի. Լենինի հետ և կուսակցության առաջնորդի հանձնարարականով շրջելով Եվրոպայի մի շարք երկրներում, զբաղվում է անլեգալ գրականության առաքման, ռուսական հեղափոխության համար զենքի հայթայթման, հեղափոխական գործիչների միջև կապերի հաստատման ու ամրապնդման հարցերով[4]։

1911 թ. սեպտեմբերին անլեգալ, թուրք առևտրականի հագուստով Կամոն Բաթումից շոգենավով մեկնում է Բուլղարիա, ապա անցնում Բելգիա և այնտեղից Ա. Ա. Բոգդանովի հետ միասին գնում է Փարիզ՝ Վ. Ի. Լենինի մոտ։ Բաթումից արտասահման մեկնելու ժամկետների և վայրերի մասին գրականության մեջ տարբեր տվյալներ են բերվել։ Արտասահմանյան գործակալության 1911 թ. նյութերում այդ մասին նշված է. «1907 թ. Թիֆլիսում 250000 ռուբլու բռնագրավման գործով հայտնի Կամո-Միրսկին (Տեր-Պետրոսյան), փախչելով Թիֆլիսի բանտից, այս տարվա դեկտեմբերին մեկնել է Բրյուսել՝ Բոգդանովի մոտ։ Այնտեղից, վերջինիս հետ, Կամո-Միրսկին եկել է Փարիզ»[5]։

Ժամանակակիցների հիշողություններից երևում է, որ Կամոյի արտասահման անցնելն ու Փարիզ ժամանելը տեղի է ունեցել 1911 թ. աշնանը։ Ն. Կ. Կրուպսկայան Վ. Ի. Լենինի մասին իր հիշողություններում գրել է, որ 1911 թ. Փարիզ է եկել Կամոն՝ Իլյիչի հետ զրուցելու։ «Կամոն խնդրեց ինձ,— հիշում է Կրուպսկայան,— որ իր համար նուշ գնեմ։ Նստած Փարիզի մեր հյուրասենյակ-խոհանոցում, նա նուշ էր ուտում, ինչպես իր հայրենիքում, և պատմում Բեռլինում ձերբակալվելու մասին, պատիժներ էր հորինում այն պրովոկատորի համար, որը մատնել էր իրեն, պատմում էր սիմուլյացիայի տարիների մասին, երբ խելագար էր ձևացել, իր ձեռնասուն ճնճղուկի մասին, որը զբաղեցրել էր նրան բանտում»[6]։ Լենինը ուշադիր լսում էր Կամոյին, սլատմում նրան կուսակցական գործերի վիճակի մասին, վերլուծում բոլշևիկյան դործիչներ Ա. Ա. Բոգդանովի ու Լ. Բ. Կրասինի թույլ տված սխալները։ Կամոն երկար տարիներ աշխատել էր Լ. Բ. Կրասինի անմիջական ղեկավարությամբ, բարեկամացել Բոգդանովի հետ և, Կրուպսկայայի արտահայտությամբ, «սաստիկ տանջվում էր այն հանգամանքից, որ պառակտում է առաջացել մի կողմից Իլյիչի և մյուս կողմից Բոգդանովի և Կրասինի միջև»։ Պատմելով Կամոյի բազմաթիվ սխրագործությունների մասին, Կրուպսկայան նշում է, որ նա ուներ ջերմ սիրտ, պատրաստ էր մեծ սխրանքների և բանտից փախչելուց հետո չգիտեր, թե ինչ անի։ Նրա աշխատանքի ծրագրերը ֆանտաստիկական էին։ Իլյիչը չէր առարկում, զգուշությամբ աշխատում էր իրական ուղու վրա դնել Կամոյին, խոսում էր տրանսպորտ կազմակերպելու մասին և այլն»[7]։

---

4 Հիշյալ հարցերը լուսաբանելու համար մենք օգտագործել ենք հատկապես Բուլղարիայի կուսակցական և պետական արխիվներում պահպանված նյութերը և բուլղար պատմաբանների (Իցո Սամուիլով, Անգել Վեկով և ուրիշների) նոր ուսումնասիրությունները, որոնց ծանոթացանք 1980 թ. սեպտեմբերին Բուլղարիայում մեր գիտական գործուղման ընթացքում։

5 ЦГИАМ, ф. ДП, 00, 1911, д. 235, л. 49

6 Ն. Կ. Կրուպսկայա. Հիշողություններ Լենինի մասին. Երևան, 1977, էջ 224։

7 Նույն տեղում, էջ 225։

Ռուսական երկու հեղափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանում Փարիզը Ռուսաստանից եկած քաղաքական վտարանդիների յուրահատուկ կենտրոն էր։ Այնտեղ էին գտնվում այն ժամանակվա կուսակցությունների և խմբավորումների ղեկավար կենտրոնները, այնտեղ էին հրապարակվում մամուլի բազմաթիվ օրգաններ։ 1908 թ. վերջից Փարիզում էր տպագրվում բոլշևիկյան «Պրոլետարի» թերթը. այդ կապակցությամբ Լենինը և Կրուպսկայան տեղափոխվել էին Փարիզ և մինչև 1912 թ. սկիզբը ապրում էին Մարի-Ռոզ փողոցի № 4 տանը, որն այժմ թանգարան է և մշտապես դեպի իրեն է գրավում բազմաթիվ այցելուների։ Հենց այդ տանն էլ բազմիցս լինում էր Կամոն, այնտեղ հանդիպում կուսակցության շատ գործիչների հետ։

1911 թ. գարնանը Փարիզի մոտ Լոնժյումո վայրում Վ. Ի. Լենինը կազմակերպում է կուսակցական դպրոց, որի ունկնդիրները Ռուսաստանից խոշոր կուսակցական կազմակերպությունների կողմից գործուղված հեղափոխականներն էին։ Նրանց թվում էր Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որին դեռևս դարի սկզբին կուսակցական աշխատանքի էր ընդգրկել Կամոն։ Տարիներ անց, 1922 թ. հուլիսի 18-ին, Թիֆլիսում, Կամոյի թաղման ժամանակ արտասանած ճառում Օրջոնիկիձեն ասել է. «Թանկագի՜ն Կամո։ Հանդիպեցի քեզ 18 տարի առաջ։ Ես երիտասարդ էի։ Դու քո պարտքն էիր համարում բացատրել ինձ ինչպես դառնալ բոլշևիկ, ինչպես պայքարել պրոլետարիատի շահերի համար»[8]։ Ջերմ էր Փարիզում Կամոյի և Օրջոնիկիձեի հանդիպումը։ Այդ մասին Սերգո Օրջոնիկիձեի կինը, հին բոլշևիկ Զինաիդա Օրջոնիկիձեն պատմում է. «Սերգոն վտարանդվեց Ֆրանսիա 1910 թ. վերջին։ Շուտով Փարիզ եկավ նրա առաջին հեղափոխական ուսուցիչը՝ լեգենդար բոլշևիկ Կամոն... Փարիզում զբոսնելիս Կամոն պատմում էր Սերգոյին երկար տարիների տառապանքների մասին... Սակայն փորձությունները նրան չէին ընկճել։ Նա պահպանել էր կենսուրախությունը, հեղափոխության նկատմամբ անկոտրում կամքը, անսահման նվիրվածությունը բոլշևիկյան կուսակցությանը։

Սերգոն և Կամոն արտասահման էին եկել այն ժամանակ, երբ Սերգոյի բառերով «Իլյիչի գլխավորած բոլշևիկյան խումբը բոլոր կողմերից գնդակոծվում էր»[9]։ Կամոն և Օրջոնիկիձեն միասին հաճախակի լինում էին Լենինի մոտ, զրուցում, քննարկում հետագա աշխատանքների պլանները։

Կամոյի հանդիպումներն ու զրույցները Վ. Ի. Լենինի հետ հսկայական նշանակություն ունեցան խիզախ հեղափոխականի համար, որը որպես կուսակցության հավատարիմ զինվոր նոր մարտերի էր պատրաստվում ցարական ինքնակալության դեմ։ Այն ժամանակ, Ռուսաստանում սկսված հեղափոխական նոր վերելքի պայմաններում, Լենինը նոր խնդիրներ էր դնում կուսակցության առաջ. անհրաժեշտ էր բանվոր դասակարգին, գյուղացիությանը, բանակը նախապատրաստել գալիք հեղափոխության համար՝ օգտագործելով աշխատանքի լեգալ և անլեգալ հնարավորությունները, ամրացնելով կապերը մասսաների հետ։ Լենինը կոչ էր անում արտասահմանում ևս համախմբել բոլոր իսկական հեղափոխական, կուսակցական ուժերը։ Նոր պայմաններում կուսակցության հիմնական խնդիրները Լենինը ձևակերպում է այն ժամանակ Փարիզում հրապարակվող ՌՍԴԲԿ Կենտկոմի կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթում հրատարակված «Կուսակցական ճգնաժամի լուծումը», «Լոզունգների և դումայական և արտադումայական ս. դ. աշխատանքի դերվածքի մասին» հոդվածներում։ Բոլշևիկները Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ նախապատրաստվում էին ՌՍԴԲԿ VI Համառուսաստանյան կոնֆերանսին, որը տեղի ունեցավ Լենինի ղեկավարությամբ 1912 թ. հունվարին Պրագայում և պատմական դեր խաղաց բոլշևիկների կուսակցության, նոր տիպի կուսակցության կառուցման գործում։ Նրա նախապատրաստման շրջանում գտնվելով

---

[8] Գ. Կ. Օրջոնիկիձե. Ընտիր հոդվածներ և ճառեր. Երևան, 1950, էջ 97։

[9] З. Орджоникидзе. Путь большевика. М., 1956, с. 88, 90.

Փարիզում, Կամոն իր ուժերն ու եռանդը նվիրում էր բոլշևիկների լոզունգների ներքո բոլոր հեղափոխական ուժերի համախմբման, մասսաների շարժման ընդլայնման, պրոլետարիատի սոցիալիստական դաստիարակման աշխատանքներն ուժեղացնելու լենինյան պահանջների իրականացմանը։

Ինչպես միշտ, այս անգամ ևս Լենինը մեծ հոգատարություն է ցուցաբերում Կամոյի նկատմամբ։ Կամոյի աչքի ալրատը (որը բարիկադային կռիվներում վիրավորվելու հետևանք էր) բուժելու համար Լենինը Փարիզում Կամոյին տանում է պրոֆեսոր վիրաբույժի մոտ, այդ նպատակով լիազորագիր-նամակ է վերցնում ֆրանսիական սոցիալիստների լիդեր Ժան Ժորեսից, խորհուրդ է տալիս Կամոյին աչքերի վիրահատության համար գնալ Բելգիա, հանգստանալ, բուժվել և ապա ծովով՝ Բալկանյան երկրներում, Թուրքիայում մի շարք հանձնարարություններ կատարելուց հետո, վերադառնալ Կովկաս։ Հիշելով այդ մասին, Ն. Կ. Կրուպսկայան գրում է. «Տեսնելով Կամոյի վերարկուն, Իլյիչը հարցրեց. «Ունե՞ք արդյոք տաք վերարկու, չէ՞ որ ցուրտ կլինի ձեզ համար տախտակամածի վրա ման գալիս»։ Ինքը՝ Իլյիչը, երբ ճանապարհորդում էր ծովով, անդադար ետ ու առաջ էր քայլում տախտակամածի վրա։ Եվ երբ պարզվեց, որ Կամոն ոչ մի ուրիշ վերարկու չունի, Իլյիչը տվեց նրան իր փափուկ գորշ թիկնոցը, որը մայրն էր ընծայել նրան Ստոկհոլմում, և որը առանձնապես դուր էր գալիս Իլյիչին»[10]։ Կամոն, որը ցարական մեծ գումարների բռնագրավման անմիջական կազմակերպիչն էր, այդ փողերը լրիվ տրամադրում էր հեղափոխության նպատակներին, շատ դեպքերում հագնվելու և սնվելու միջոցներ անգամ չունենալով։

Ֆրանսիական նշանավոր գրող, հրապարակախոս և պատմաբան Ժան Ֆրեվիլը «Լենինը Փարիզում» գրքում ջերմ էջեր է նվիրել նաև Կամոյի անխոնջ հեղափոխական գործունեությանը, անվանել է նրան հոգով և մարմնով կուսակցությանը նվիրված իսկական լեգենդար հերոս, որը մասնակցել է հեղափոխությանը կովկասյան ավանդույթների ոգով։ Պատմելով Փարիզում Լենինի հետ Կամոի հանդիպումների մասին, Ժան Ֆրեվիլն ավելացնում է. «Կամոյի անշահախնդրությունը չէր զիջում նրա զարմանալի համարձակությանը»[11]։

Փարիզի արխիվներում և ֆրանսիական թերթերում ևս բազմաթիվ նյութեր կան, որոնք վկայում են Կամոյի սխրագործությունների և մասնավորապես 1907—1909 թթ. Բեռլինի բանտերում ու հիվանդանոցներում նրա «խելագար» ձևանալու մասին, որը լեգենդար հեղափոխականի հոգեկան ու ֆիզիկական խիզախության, հնարամտության, հեղափոխության գործին արտակարգ նվիրվածության փայլուն վկայության հիանալի օրինակներից էր, բազմաթիվ ապացույցներից Կամոյի այն հայտարարության, որ ինքն իր անձնական շահերի համար ոչինչ չի արել, որ այն, ինչ արել է, բխել է կուսակցության, հեղափոխության նպատակներից։ Հենց այդ նպատակով էլ Կամոն, հաղթահարելով բոլոր դժվարությունները, Լենինի նոր առաջադրանքները կատարելու համար 1912 թ. սկզբին Փարիզից մեկնում է Ժնև, ապա Դանիա, իսկ այնտեղից՝ Կոստանդնուպոլիս։ 1913 թ. Ա. Ա. Բոգդանովին գրած նամակում Կամոն այդ մասին հայտնում է. «Ես գնացի Ժնև։ Ուզում էի հանդիպել ընկերների հետ։ Իրոք նրանք շատ ուրախացան։ Խորհուրդ տվեցին չգնալ Ռուսաստան, սակայն ես, իհարկե, չհամաձայնվեցի։ Ժնևից Դանիա գնալս մեկ նպատակ ուներ, սակայն այնտեղ չգտա այն, ինչ ուզում էի։ Հանդիպելով մի ընկերոջ, ես վերադարձա և մեկնեցի Ցարգրադ»[12]։ Ժնևում և Դանիայում կոնկրետ ինչ գործով և ում հետ է հանդիպել Կամոն, մեզ հայտնի չէ, սակայն Կոստանդնուպոլսում և Սոֆիայում նրա հեղափոխական գործունեության մասին բավականին նյութեր կան, որոնց զգալի մասը շրջանառության մեջ է մտցվել վերջին տարիներին։

10 Ն. Կ. Կրուպսկայա. Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, էջ 225։

11 Жан Фревиль. Ленин в Париже. М., 1969, с. 174.

12 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ. ֆ. 259, ց. 1, գ. 64, թ. 1։

Կոստանդնուպոլիսը Օդեսայի, Բաթումի և սևծովյան այլ նավահանգիստների միջոցով դեպի Ռուսաստան և մասնավորապես Կովկաս անլեգալ հեղափոխական գրականության առաքման կարևորագույն կենտրոններից էր։ Այնտեղ գործում էին սոցիալիստներ և բոլշևիկներ, որոնք կապեր ունեին բոլշևիկների Ռուսաստանի և արտասահմանյան կազմակերպությունների հետ։ Ռուսական առաջին հեղափոխությունից հետո Կոստանդնուպոլսում գործում էին հայկական և վրացական սոցիալ-դեմոկրատական խմբեր։

Ժամանելով Կոստանդնուպոլիս, Կամոն անմիջապես զբաղվում է նոր գաղտնի բնակարաններ և գրականության պահեստներ ստեղծելու հարցով։ Այդ գործում նրան մեծ օգնություն են ցույց տալիս հայ ու վրացի սոցիալ-դեմոկրատները։ Կամոյին հաջողվում է նաև կապեր հաստատել ցարական կառավարության հետապնդումներից դժգոհ կազմակերպությունների, մասնավորապես վրացի կաթոլիկների հետ։ Թիֆլիս, իր քրոջը՝ բոլշևիկ Ջավահիր Տեր-Պետրոսյանին ուղարկած նամակում Կամոն գրում էր. «Ջավահիր, խնդրիր պետերիդ թույլտվությունը՝ արտասահման անցնելու համար։ Լավ կլինի, եթե քեզ թույլ տան ապրելու Կոստանդնուպոլսում։ Այնտեղ վրաց կաթոլիկներ՝ կազմակերպած կանացի մենաստան կա, որտեղ ինձ լավ գիտեն և դու լավ կապրես, բացի դրանից դու կարող ես ուսումնասիրել օտար լեզուներ, որովհետև այնտեղ կա շատ լավ, օրինակելի ուսումնարան, որտեղ հատկապես սովորում են օտար լեզուներ»[13]։

Հիշյալ մենաստանը գտնվում էր Կոստանդնուպոլսի Ֆերիկուսի արվարձանում և կոչվում էր «Նոտր Դամ դե Լուրդ»։ Ռուսաստանից շատ վտարանդիների համար թաքստոց էր ծառայում Պապաս-Կուսպրի տեղամասում գտնվող մենաստանի դպրոցը։

Հատկապես մեծ օգնություն էին ցույց տալիս Կամոյին վրացի բանվորները, որոնց միջոցով նա կապեր էր հաստատում տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ։ Նրանցից մեկի մասին, որի անունը Պետրո էր, Օդեսայի ժանդարմական վարչության 1913 թ. նոյեմբերի 29-ի զեկուցագրում նշված էր. «Թուրքիայում, գործակալության վարիչից ուղարկված տեղեկությունների համաձայն, վրացի Պետրոն դրամական օժանդակություն ստանալով Կոստանդնուպոլսում վրացական կաթոլիկական եղբայրությունից և երկրորդ պետական դումայի նախկին անդամ Արշակ Զուրաբովից, ընտանիքով գնացել է Ամերիկա։ Կոստանդնուպոլսում գտնված ժամանակ «Պետրոն» մտնում էր անցյալ տարի այնտեղ բնակվող Սեմյոն Արշակով Տեր-Պետրոսյանի «Կամո» կազմակերպության մեջ և օժանդակում նրան 18 կիլոգրամ դինամիտ Ռուսաստան առաքելու գործում»[14]։

Պահնորդականները հայտնում էին, որ Կոստանդնուպոլսում Կամոն ապրում էր վանականների մոտ Իրակլի Տատինի, Վանո Ալիխանովի և Պետրո Ուրուշելիի հետ միասին։ Ցարական գործակալ ոմն Միխայիլ Օրլով հայտնում էր, որ Պապաս-Կուսպրի տեղամասին կից վանական դպրոցը «թաքստոց է Ռուսաստանից քաղաքական ու քրեական փախստականների համար։ Լուրերի համաձայն, Կամոն, Կոստանդնուպոլսից մեկնելիս վանականներին խոստացել է խոշոր գումար ճեմարան կառուցելու համար։ Վերջերս, հակառակ կաթոլիկական արքեպիսկոպոսի արգելքներին, մի քանի վրացի վանականներ, թյուրիմացության մեջ գցելով մեր դեսպանությանը, ծնողների հիվանդության կամ մահվան առիթով, զինվորական հագուստներով, գաղտնի գործով մեկնել են Ռուսաստան»[15]։

Ոստիկանական գործակալների զեկուցագրերը հայտնում էին Օդեսայի, Բաթումի և սևծովյան այլ նավահանգիստների հետ Կամոյի և նրա ընկերների ունեցած կապերի մասին։ Կոստանդնուպոլսում Կամոն փորձում է կապեր հաստատել նաև մի քանի երիտթուրքերի հետ, որոնք զբաղվում էին զենք գնելով,

---

13 «Товарищ Камо. По документам Центрархива Грузии». Тифлис, 1924, с. 8.

14 Նույն տեղում, էջ 7։

15 Նույն տեղում։

սակայն համոզվելով, որ նրանք խաբեբաներ են, որոշում է թողնել Կոստանդնուպոլիսը և անցնել Բուլղարիա։ Դա հայտնի է դառնում ցարական պահնորդական վարչությանը, որի գործակալ Միխայիլ Օրլովը Կոստանդնուպոլսից Թիֆլիսի շրջանային դատարանին գրում էր. «Եվրոպայից այստեղ գալով, Կամոն մաքսատանը ձերբակալվեց թուրքական իշխանությունների կողմից։ Ֆերիկուսի արվարձանի վրացական Նոտր դե Լուրդ մենաստանի ռուսահպատակ վրացի կաթոլիկ վանականների միջնորդությամբ ազատվեց, իսկ նրա մոտ եղած ռումբերը բռնագրավվեցին։ Հիշյալ Կամոն որոշ ժամանակ ապրում էր Պապաս-Կուսպրիի վրացական մենաստանի տանը, իսկ վանականները, տալով նրան իրենց մտերիմ բուլղարացու անձնագիրը, ուղարկեցին Բուլղարիա ռումբեր ձեռք բերելու և ապա Ռումինիայի միջով Ռուսաստան-Կովկաս անցնելու համար»[16]։

Բուլղար պատմաբան Անգել Վեկովը գրում է, որ Կամոյին օգնող բուլղարացիներից մեկը Նիկոլա Տրայչևն էր, որին գիտեին Լենինը և Գեորգի Դիմիտրովը։ Մյուս բուլղարացին հայտնի է Մարկո ծածկանունով, որի ով լինելը պարզված չէ։ Ն. Տրայչևն ականավոր հեղափոխական էր, որը կուսակցության հանձնարարությամբ զբաղվում էր զենքի և անլեգալ գրականության առաքման գործով։ Այդ նպատակով Կոստանդնուպոլսում նա կազմակերպել էր առևտրական գրասենյակ և բնակարան ուներ հանդիպումների համար։

Կամոյի և բուլղարական հեղափոխականների միջև սերտ հարաբերություններ էին հաստատվել դեռևս 1906 թ. գարնանից, երբ նա կուսակցության հանձնարարականով առաջին անգամ այցելել է Բուլղարիա՝ Ռուսաստանում ծավալվող հեղափոխության համար զենք առաքելու։ Բոլշևիկյան ականավոր գործիչներ Լ. Կրասինի և Մ. Լիտվինովի անմիջական ղեկավարությամբ և բուլղար ինտերնացիոնալիստներ Ռ. Սբրամովի, Բ. Ստոմանյակովի, Դ. Բակալովի, Պ. Նոնչևի, Ս. Ջորովի և ուրիշների օգնությամբ Կամոն զենք և գրականություն էր ուղարկում Կովկաս։ Նրան լավ գիտեին Բուլղարիայի շատ հեղափոխական գործիչներ, անձամբ նրանց առաջնորդ Դիմիտր Բլագևը[17]։

Տարիներ անց, 1928 թ. սեպտեմբերին Գեորգի Դիմիտրովը Միխա Ցխակայային գրում էր. «Ես Ձեզ անձամբ արդեն ասել եմ ընկ. Նիկոլա Քրիստով Տրայչևի՝ բուլղարական կոմունիստի մասին։ Երկար տարիներ նա աշխատել է Կոստանդնուպոլսում, եղել է վրացական հեղափոխականներ Կամոյի, Գիգոյի, Գուրիելիի, Ջափարիձեի և մյուսների զինակիցը։ Ընկ. Տրայչևը հիանալի հեղափոխական է և արտակարգ ընդունակ աշխատող»։ Պահպանվել է նաև Տրայչևի հետևյալ գրությունը Մ. Ցխակայային. «Ես այն մորուքավոր, 1921 թ. Կոմինտերնի երրորդ կոնգրեսի պատգամավոր բուլղարացին եմ, որը ձեր օգնությամբ հանդիպեց այն ժամանակ Մոսկվայում ապրող Կամոյի հետ»։

Սոֆիայում Կամոն գրանցվում է Սեմյոն Սավչուկ անվամբ։ Սակայն դեռ կայարանում նրան ձերբակալում են՝ մեղադրելով Թուրքիայի օգտին լրտեսության մեջ։ Սոֆիայի քաղաքապետն անձամբ հարցաքննում է Կամոյին, որը հայտնում է, որ ինքը ոչ թե թուրք է, այլ ռուս սոցիալ-դեմոկրատ։ Քաղաքապետը պահանջում է Կամոյից, որ նրա խոսքերը հաստատվեն Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ներկայացուցչի կողմից։ Այդ մասին հետագայում Կամոն գրել է. «Սկզբում ես ցանկանում էի վկայակոչել Իլյիչին, որպես ինտերնացիոնալ բյուրոյի անդամի, իսկ հետո մատնանշեցի Բլագևին»[18]։ Այդ ժամանակ Դ. Բլագևը սոցիալ-դեմոկրատների կողմից Բուլղարիայի պառլամենտի անդամ էր։ Կամոն և Բլագևը ծանոթ էին հեռակա, անձամբ չգիտեին միմյանց։ Սակայն այս անգամ ևս Կամոյին օգնության է գալիս բարդ իրադրության պայմաններում նրա արագ կողմնո-

---

16 Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ. ֆ. 87, գ. 545, թ. 185։

17 Այս մասին տե՛ս մեր Из истории русско-армянско-болгарских революционных связей. Камо в Болгарии, 1906 г. հոդվածը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1981, № 3)։

18 Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ. ֆ. 8, ց. 5, գ. 166, թ. 74։

որոշվելու հմտությունը և հնարամտությունը։ Կամոն առաջարկում է գաղտնի գործակալի ուղեկցությամբ գնալ Դ. Բլագոևի տունը և երբ նրանք Սոֆիայի փողոցներից մեկով անցնում էին, գործակալը Կամոյին ցույց է տալիս փողոցով անցնող Բլագոևին. Կամոն իսկույն մոտենում է նրան և աննկատելի ասում, որ ինքը Կամոն է և ապա քայլելով Բլագոևի հետ, բացատրում է նրան գործի էությունը։ Բուլղարական «տեսնյակների» առաջնորդը պաշտոնապես հաստատում է Կամոյի՝ ռուսական հեղափոխական լինելու փաստը։ Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Կենտկոմի և պառլամենտի անդամ Գեորգի Կիրկովը Կենտկոմի անունից հանդիպում է քաղաքապետի հետ և հայտնում այդ մասին։ Կամոն ազատ է արձակվում։

Բուլղարիայի կոմունիստական կուսակցության օրգան «Ռաբոտնիչեսկի վեստնիկ» թերթը 1922 թ. օգոստոսի 7-ի համարում տպագրված, Կամոյի հիշատակին նվիրված հոդվածում նրան բնորոշում է որպես «Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության հազվագյուտ հերոսի, որի ողջ կյանքը լի է եղել չտեսնված արիությամբ, մարտիրոսությամբ ու անձնուրացությամբ՝ հանուն ճնշվածների և մոռացվածների գործի... Իր բնական մեծ խելքով նա արտակարգ արագ կողմնորոշվում էր կուսակցության գործունեության ծանր հարցերում, ուներ վաղվոան խառնվածք, որն իր կնիքն էր թողնում նրա բոլոր գործողությունների, ամենահամարձակ ձեռնարկումների վրա»։

1912 թ. հունիսին Կամոն մեկնում է Հունաստան, որտեղ ղենք և զրկանություն հայթայթելու և Ռուսաստան առաքելու նպատակով հանդիպումներ է ունենում հայ վտարանդիների հետ։ «Հունաստանում ես այնպիսի կապեր հաստատեցի,— հիշում է Կամոն,— որ այնտեղից կարելի էր մատակարարել ոչ միայն Կովկասը, այլև ամբողջ Ռուսաստանը»[19]։ Օգտագործելով Աթենքում գտնվելու օրերը Կամոն ծանոթանում է նրա պատմական հուշարձաններին։ «Երբ ես եղա Հունաստանում,— գրում է Կամոն,— անսահման սիրով դիտեցի այդ երկիրը, զմայլվեցի նրա ավերակներով և մի քանի անգամ այցելեցի Պարթենոնը»։ Հուլիսին Կամոն Աթենքից վերադառնում է Կոստանդնուպոլիս, որտեղ հանդիպում է Պարսկաստանից եկած իր մարտական ընկեր Գրիգորի Մատիաշվիլու (Գիգո) հետ։ «Ես նրան գիտեի որպես հիանալի մարտիկի,— հիշում է Կամոն Գ. Մատիաշվիլու մասին,— Պարսկաստանում նրա փայլուն սիրագործությունների մասին շատ էին պատմում։ Ես գնացի նրա մոտ, շարադրեցի գործողությունների իմ պլանը։ Նա ուրախությամբ համաձայնվեց։ Որոշեցինք գնալ Կովկաս այդ պլանն իրագործելու։ Ես նրան որոշ հանձնարարականներ տվեցի։ Ուղարկեցի Մատիաշվիլուն Տրապիզոն մեր փոխադրաբեռներն ընդունելու։ Ամեն ինչ արեց գերազանց։ Հետո նա Բաթումի վրայով գնաց Կովկաս»[20]։ Գրիգորի Մատիաշվիլին հեղափոխական գործունեության համար ցարական իշխանությունների կողմից ձերբակալվում է, աքսորվում տաժանակրության, ուր և մահանում է։

1970 թ. մարտին Բուլղարիայում (Պլովդիվ) լույս տեսնող «Ոտեչեստվեն գլաս» («Հայրենիքի ձայն») թերթում հրատարակվում է լրագրող Դ. Դոյչինովի հետաքրքիր հոդվածը՝ «Կամոն Լենինի սիրելին» վերնագրով, որտեղ բերված են նոր տվյալներ Կոստանդնուպոլսում բուլղարական հեղափոխականների և մասնավորապես Նիկոլա Տրայչևի հետ Կամոյի ունեցած կապերի մասին։ «Պլովդիվի կուսակցական արխիվում հայտնաբերված Նիկոլա Տրայչևի փաստաթղթերը բաց արեցին նոր հեռք,— գրում է Դ. Դոյչինովը։— Ֆաշիզմի դեմ պայքարած տարեց մարտիկների Բանկիում գտնվող տանը բնակվում էր մի կին, որը մոտիկից ճանաչում էր Կամոյին։ Ցվետա Տրայչևան, Նիկոլայի քույրը, իր երիտասարդական տարիները անցկացրել էր Կ. Պոլսում և հուշեր էր պահել առասպելական Կամոյի հետ ունեցած կապերի մասին։ Եվ մի օր մայիս ամսի վերջերին մեկնեցի Բանկի։ Տարիները հետքեր էին թողել այդ կնոջ առողջության վրա, սակայն նրա միտքը դեռևս չափազանց թարմ էր։

19 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Կենտրոնական կուսակցական արխիվ. ֆ. 259, ց. 1, գ. 64, թ. 2։

20 Նույն տեղում։

Բավական էր հիշատակել տարեթիվը և Կ. Պոլիսը, որպեսզի նրան հրավիրեի մի շատ հետաքրքրական զրույցի. «Իհարկե, ես Կամոյին ճանաչում էի ավելի վաղ, որպես եղբորս՝ Նիկոլայի բարեկամի, քան որպես պրոֆեսիոնալ հեղափոխականի, որը դարձել էր ռուսական ցարիզմի սարսափը։ Նա բացառիկ սրտակից մարդ էր, կապվել էր մեր ընտանիքի հետ և հաճախ մեր հյուրն էր։ Կ. Պոլսում մարդիկ նրան գիտեին որպես հայր Բեռնարդո։ Իր բնավորության բոլոր լավ գծերից բացի Կամոն նաև հիանալի ձայն ուներ։ Երբ երգում էր Սանտա-Աննայում, եկեղեցին չէր բավարարում հավաքվածներին։ Մի ուշ գիշեր, երբ կանթեղի լույսի ներքո ընթերցում էի այժմ արդեն մոռացված գրքի վերջին էջերը, լսեցի միջանցքից հասնող նրա ձայնը. Երևի մինչ այդ եղբորս հետ մյուս սենյակում մի բանի մասին էին խելք-խելքի տվել։ Հանկարծ իմ սենյակի դուռը բացվեց և ներս մտավ Կամոն. գրքով տարված, ես չէի լսել թակոցը։ Ինձ բարևեց, հետո հարցրեց, թե ինչ գիրք եմ կարդում և պատրաստվեց գնալու։ Հանկարծ դռան մոտ, երևի ինչ-որ բան հիշելով, վերադարձավ։ «Որ կանթեղ ունես, պետք է խաչ էլ ունենաս», ասաց և, վարակիչ ծիծաղով, ինձ տվեց մի փոքրիկ արծաթյա խաչ։ Երկար տարիներ այն պահել էի որպես հիշատակ։

Երբ Կամոն թուրքերի կողմից կալանավորված էր, Նիկոլան, որ մոտիկից ծանոթ էր նահանգապետին, որոշեց միջամտել և օգնել նրա ազատմանը։ Սակայն նահանգապետը նրան ասել էր. «Չէ՞ որ նա հայ է. Կամոյին ազատ արձակելը մեր՝ թուրքերի կողմից, քմեկնաբանվի որպես հանցագործություն»։ Նիկոլան նրան պատասխանել էր. «Փաշա էֆենդի, չէ՞ որ դուք էլ կովկասցի չերքեզ եք, բայց գտնվում եք այստեղ, որովհետև ձեր պապերն ու հայրերը փախել են ցարական Ռուսաստանի բռնակալությունից։ Կամոն հայ է, սակայն նա չերքեզների, վրացիների, ադրբեջանցիների և այլ ազգությունների մարդկանց հետ պայքարում է ճնշված ժողովուրդների ազատության համար։ Եվ այդպիսի մի մարդուն դուք ուզում եք հանձնել ռուսական ցարին։ Նահանգապետը Կամոյին ազատում է»։

1912 թ. օգոստոսին Կամոն Նիկոլա Տրալչևի անունով կեղծ անձնագրով Կոստանդնուպոլսից մեկնում է Օդեսա, ապա անցնում Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, հանդիպումներ է ունենում կուսակցական գործիչների հետ, հաղորդում նրանց իր աշխատանքների մասին, համաձայնեցնում իր հետագա գործողությունների պլանները։

Կամոյի հեղափոխական գործունեության արտասահմանյան տարիները լեգենդար բոլշևիկի կյանքի, կուսակցության և անձամբ նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի պատասխանատու հանձնարարությունների իրագործման համար նրա սխրագործությունների անմոռաց էջերից են, որոնց ուսումնասիրությունը հարստացնում է մեր պատկերացումները լենինյան գվարդիայի մարտիկների, կուսակցությունն ու ժողովրդին նրանց անսահման նվիրվածության, ինտերնացիոնալիզմի, միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման զարգացման գործում ունեցած մեծ դերի մասին։ Վ. Ի. Լենինի, նրա զինակիցների և աշակերտների գործունեությունը արտասահմանում սերտորեն կապված էր Ռուսաստանի հեղափոխական շարժումների հետ, ծառայում էր նրանց զարգացմանը։

Իր բուռն հեղափոխական գործունեության համար Կամոն արժանանում է Վ. Ի. Լենինի ամենաբարձր գնահատականին որպես «միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախության և եռանդի տեր մարդ»։ Հիացմունքով խոսելով Կամոյի մասին, Մաքսիմ Գորկին ասել է. «Նա մարդ էր առանց պոզայի։ Նա հեղափոխության գեղարվեստագետն էր»։